

“ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ”

ՎՊՄԻ-ի ռեկտոր, բգդ

_____ Գ.Կ. Խաչատրյան

“_16_” _09_ 2010թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**"Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ" պետական ոչ առևտրային կազմակերպության**

Կրթական բարեփոխումների և կապերի բաժնի

Հաստատված է ՎՊՄԻ-ի գլխավոր հրդի նիստին,

Արձանագրություն թիվ 7, “_16_” _09_ 2010թ.

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ՎՊՄԻ) կրթական բարեփոխումների և կապերի բաժնի (այսուհետ՝ Բաժնի) կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է ՎՊՄԻ-ի տվյալ Բաժնի կազմակերպչական և մեթոդական հիմքը և նրա հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Ինստիտուտի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բաժինը ՎՊՄԻ-ի կառուցվածքային ստորաբաժանումն է և անմիջականորեն ենթարկվում է ինստիտուտի պրոռեկտորներին:

1.2. Բաժինը իր գործունեության մեջ առաջնորդվում է ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» օրենքներով, ՀՀ Կրթության և գիտության նախարարության նորմատիվային փաստաթղթերով, ՎՊՄԻ-ի կանոնադրությամբ, ՎՊՄԻ-ի գիտխորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և սույն Կանոնակարգով:

1.3. Բաժնի աշխատանքը ղեկավարում է Բաժնի վարիչը, որը նշանակվում է սույն պաշտոնին և ազատվում է պաշտոնից ռեկտորի հրամանով՝ համաձայն գործող աշխատանքային օրենսդրության:

1.4. Բաժինը համագործակցում է ՎՊՄԻ-ի այլ ստորաբաժանումների հետ:

2. Բաժնի գործունեության նպատակը

2.1. Բաժնի գործունեությունն ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը.

- Կրթական բարեփոխումների նախապատրաստում,
- Գործուն արտաքին կապերի ստեղծում,
- «Բուհ-դպրոց» կայուն և բազմակողմանի կապերի ապահովում:

3. Բաժնի գործունեության խնդիրները և ուղղությունները

3.1. Կրթական բարեփոխումների բնագավառում.

- Նախապատրաստել և ՎՊՄԻ-ի ղեկավարությանը ներկայացնել ՀՀ-ում և ԱՊՀ երկրներում իրականացվող կրթական բարեփոխումներին վերաբերող տեղեկատվական-վերլուծական նյութեր,

- Նախապատրաստել և պլանավորել ՀՀ Կրթության և գիտության նախարարության՝ ՀՀ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքով

թելադրված բարեփոխումների ներդրման աշխատանքները՝ ապահովելով այդ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական, հայեցակարգային և մեթոդական նյութերը, մշակել Բաժնի գործունեության ուղղություններից բխող գործառույթների մեթոդական ապահովումը,

- Տրամադրել տեղեկատվական և մեթոդական աջակցություն՝ ՎՊՄԻ-ում նոր կրթական ծրագրերի, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրմանն աջակցելու նպատակով,

- Ուսումնասիրել և վերլուծել Բարձրագույն կրթության Եվրոպական ընդհանուր կրթական տարածքում կիրառվող տեխնոլոգիաները՝ ՎՊՄԻ-ի կրթական գործընթացում դրանց կիրառման անհրաժեշտությունը որոշելու նպատակով:

3.2. «Բուհ-դպրոց» կապերի բնագավառում.

- ապահովել ՎՊՄԻ-ի մասնագետների ակտիվ մասնակցությունը հանրակրթական դպրոցների ուսումնական և դաստիարակչական գործունեության բնագավառում,

- նպաստել մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնակցությանը ՎՊՄԻ-ում կազմակերպվող գիտական, ուսումնամեթոդական կոնֆերանսներին, կլոր սեղաններին, սեմինարներին և այլն,

- նպաստել մարզի լավագույն ուսուցիչների կողմից ցուցադրական դասերի անցկացմանը ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության համար,

- կազմակերպել և անցկացնել առարկայական օլիմպիադաներ, նախապատրաստական դարձնաթղթեր բուհ ընդունվողների համար, խորհրդատվություններ, անհատական պարապմունքներ մարզի տաղանդավոր դպրոցականների համար,

- կազմակերպել և անցկացնել հեռավար դասեր, դասախոսություններ և խորհրդատվություններ՝ մարզի դպրոցականների, ՎՊՄԻ-ի հեռակաա բաժնի ուսանողների համար,

- անցկացնել արտադասարանային մշակութային, մարզական, բնապահպանական միջոցառումներ՝ մարզի դպրոցականների և ՎՊՄԻ-ի ուսանողների մասնակցությամբ ,

3.3. Արտաքին կապերի զարգացման և խորացման բնագավառում.

- հավաքել, վերլուծել, հիմնավորել և ներկայացնել տարածաշրջանային զարգացման համատեքստում հեռանկարային նշանակություն ունեցող ՎՊՄԻ-ի կրթական ծրագրերին և գիտահետազոտական աշխատանքներին վերաբերվող տեղեկատվական-վերլուծական նյութեր,

- մշակել համագործակցության ծրագրեր՝ ՎՊՄԻ-ի և ՀՀ այլ բուհերի, ինչպես նաև արտասահմանյան երկրների բուհերի միջև, համակարգել այդ ծրագրերի շրջանակներում կատարվող աշխատանքները,

- աջակցել ՎՊՄԻ-ի մասնակցությանը ՀՀ-ում գործող արտասահմանյան կազմակերպությունների կողմից հայտարարվող դրամաշնորհային ծրագրերին,

- աջակցել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատակիցների, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, ինչպես նաև ասպիրանտների ներգրավվածությանը հարավկովկասյան տարածաշրջանային նշանակություն ունեցող գիտահետազոտական, բնապահպանական նախագծերին և դրամաշնորհային ծրագրերին,

- աջակցել ՎՊՄԻ-ի և ՀՀ ԳԱԱ ինստիտուտների միջև համագործակցության ծրագրերի մշակմանը և աշխատանքների իրականացմանը,

- աջակցել ՎՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև մարզի կրթության բնագավառի մասնագետների մասնակցությանը որակավորման բարձրացման գործընթացներին,

3.4. աջակցել արտաքին կապերի բնագավառին վերաբերվող ՎՊՄԻ-ի համար հետաքրքրություն ներկայացնող այլ աշխատանքների կազմակերպմանը և անցկացմանը:

4. Բաժնի աշխատանքի ուղղությունները

Բաժնի աշխատանքի ուղղություններն են.

4.1. Կազմակերպչական գործունեություն՝ կրթական բարեփոխումների իրականացման, արտաքին կապերի, «դպրոց-բուհ» կապերի զարգացման բնագավառում:

4.2. Վերլուծական գործունեություն՝ ինստիտուտում իրականացվող կրթական բարեփոխումների, արտաքին կապերի, «բուհ-դպրոց» կապերի արդյունավետությունը որոշելու նպատակով:

4.3. Մեթոդական գործունեություն՝ կրթական բարեփոխումներին վերաբերվող մեթոդական նյութերի մշակում և ներդրում, արտաքին կազմակերպությունների հետ

համագործակցության տարբեր ծրագրերի մշակում, «բուհ-դպրոց» կապերի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում:

4.4. Համակարգող գործունեություն՝ Բաժնի վերը նշված աշխատանքների համակարգում և ուղղորդում:

4.5. Տեղեկատվական գործունեություն՝ կրթական բարեփոխումների, արտաքին կապերի և «բուհ-դպրոց» կապերի ոլորտում Բաժնի գործունեության արդյունքների և Ինստիտուտի ձեռքբերումների վերաբերյալ հաարակայնությանը, Ինստիտուտի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին տեղեկատվության տրամադրում:

5. Բաժնի փոխհարաբերություններն Ինստիտուտի ստորաբաժանումների և աշխատակիցների հետ

Բաժինը համագործակցում է

5.1. Ինստիտուտի ղեկավարության հետ՝ Բաժնի գործառույթներին վերաբերվող բոլոր հարցերով,

5.2. Ինստիտուտի հաշվապահության հետ՝ Բաժնի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութական միջոցների տրամադրման հարցերով,

5.3. Ինստիտուտի ուսումնական և ուսումնագիտական ստորաբաժանումների հետ՝ Բաժնի աշխատանքային պլանով նախատեսված այդ ստորաբաժանումների գործունեության շրջանակներում գտնվող հարցերով,

5.4. Ինստիտուտի իրավաբանի հետ՝ Բաժնի գործունեությանն առնչվող փաստաթղթերի մշակման և ձևակերպման հարցերով,

5.5. Ուսումնական վարչության հետ՝ կրթական բարեփոխումների ներդրման հարցերով:

6. Բաժնի աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը

6.1. Բաժնի աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը բխում են Բաժնի նպատակներից, խնդիրներից և գործունեության ուղղություններից և ամրագրվում են պաշտոնի և աշխատանքի նկարագրերով:

6.2. Բաժնի վարիչն իրավունք ունի.

6.2.1. գործել Բաժնի անունից, ներկայացնել Բաժնի շահերը ՎՊՄԻ-ի այլ ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ՝ սույն կանոնակարգի 2-րդ բաժնում շարադրված հարցերի շրջանակներում,

6.2.2. սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև իր անմիջական ղեկավարության հանձնարարությամբ դիմել ՎՊՄԻ-ի ղեկավարության աջակցությանը՝ սույն Կանոնակարգի 3-րդ բաժնում շարադրված Բաժնի գործունեության ուղղությունները իրագործելու նպատակով,

6.2.3. պահանջել Բաժնի աշխատակիցներից՝ սույն կանոնակարգի 3-րդ բաժնում շարադրված գործունեության խնդիրների որակյալ կատարում,

6.2.4. անձամբ, ինչպես նաև իր անմիջական ղեկավարության հանձնարարությամբ կատարել հարցումներ ՎՊՄԻ-ի բոլոր ստորաբաժանումների աշխատակիցներին՝ Բաժնի խնդիրների, գործառույթների և գործունեության ուղղությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր սրամադրելու համար,

6.2.5. կատարել առաջարկներ՝ Բաժնի աշխատանքը բարելավելու և կատարելագործելու ուղղությամբ,

6.2.6. ներկա գտնվել իր պարտականությունների շրջանակներում գտնվող հարցերի քննարկմանը նվիրված խորհրդակցություններում,

6.2.7. տալ առաջարկներ Բաժնի աշխատակիցների խրախուսման համար,

6.2.8. տալ առաջարկներ իր ենթակայության տակ գտնվող մասնագետների որակավորման բարձրացման ուղղությամբ,

6.2.9. դիմել իր ղեկավարությանը՝ Բաժնի աշխատակիցների նկատմամբ կարգապահական ազդեցության միջոցների կիրառման նպատակով: